ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

-- մայիսի 2024 թվականի №---Ա

«ԷԼ-ԿԱՍ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով որ՝

ա) «Էլ-Կաս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) դիմել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ խնդրելով Ընկերության գտնվելու վայրի փոփոխության հիմքով վերաձևակերպել Հանձնաժողովի 2010 թվականի փետրվարի 3-ի №19Ա որոշմամբ տրամադրված «Գեղարոտ» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության №0344 լիցենզիան (այսուհետ՝ №0344 լիցենզիա), քանի որ 2024 թվականի փետրվարի 28-ին տեղի է ունեցել Ընկերության գտնվելու վայրի փոփոխություն,

բ) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության պաշտոնական կայքում զետեղված տեղեկատվության ուսումնասիրությունից պարզվել է, որ 2021 թվականի մարտի 22-ին ևս տեղի է ունեցել Ընկերության գտնվելու վայրի փոփոխություն,

գ) Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգի (այսուհետ՝ Կարգ) 90-րդ կետի համաձայն՝ լիցենզավորված անձի վերակազմակերպման կամ նրա անվանման, կամ գտնվելու վայրի փոփոխման դեպքում լիցենզավորված անձը պարտավոր է, այդ փոփոխություններն իրավական ուժ ստանալու օրվանից սկսած տասնհինգօրյա ժամկետում, լիցենզիայի վերաձևակերպման համար հայտ ներկայացնել Հանձնաժողով՝ կցելով տեղեկություններ պետական գրանցման համարի

(պետական հաշվառման համարի) վերաբերյալ՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի,

գ) Ընկերությունը 2024 թվականի փետրվարի 28-ին տեղի ունեցած՝ գտնվելու վայրի փոփոխության հիմքով №0344 լիցենզիայի վերաձևակերպման հայտը ներկայացրել է Ընկերության գտնվելու վայրի փոփոխությունն իրավական ուժ ստանալու օրվանից 19 օր հետո՝ Կարգի 90-րդ կետով սահմանված տասնհինգօրյա ժամկետի խախտմամբ, իսկ 2021 թվականի մարտի 22-ին տեղի է ունեցել գտնվելու վայրի փոփոխության հիմքով №0344 լիցենզիայի վերաձևակերպման հայտով Ընկերությունը չի դիմել Հանձնաժողով,

դ) Հանձնաժողովը 2024 թվականի մայիսի 6-ից Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ Կարգի 90-րդ կետի հնարավոր խախտման փաստի ուսումնասիրության նպատակով,

ե) հարուցված վարչական վարույթի շրջանակում Ընկերությունը 2024 թվականի մայիսի 8-ի գրությամբ հայտնել է, որ Ընկերությունը ծանոթ չի եղել օրենսդրությանը, իսկ նախորդ դեպքում Ընկերության սեփականատերը և տնօրենն այլ անձինք են եղել,

զ) իրականացված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը խախտել է Կարգի 90-րդ կետի պահանջները, իսկ Ընկերության կողմից մատնանշված հանգամանքները՝ այն է բաժնեմասի սեփականատիրոջ և տնօրենի փոփոխությունը, ինչպես նաև օրենսդրությանը ծանոթ չլինելը չեն կարող հիմք հանդիսանալ թույլ տրված խախտման համար նախատեսված պատասխանատվությունից ազատվելու համար, և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին և 9-րդ մասերը, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը և Կարգը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Կարգի 90-րդ կետի պահանջների խախտման համար Ընկերությանը նախազգուշացնել:
2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
-- մայիսի 2024թ.